

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Lehrbuch der neuostarmenischen Litteratur Psprache. Unter Mitwirkung von Stephan Kunajanz, bearbeitet von Franz Nikolaus Finck. Vagarschapat—Marburg 1902.

1. Արեւելեան հայոց նոր գրական լեզուի դասագիրք.
Օտեփան Կանայանցի գործակցութեամբ՝ մշակեց Ֆրանց
Նիկողայոս Փինկ. Վաղարշապատ—Մարբուրգ.

Մի քանի դար է արդէն, որ Ներուպացի գիտնականներէց շատե-
րը հետաքրքրուում ու դրադուումն հայոց լեզուով, պատմութեամբ
և մատենագրութեամբ. Դը Լադարդի, Լանգլուալի, Բրօսէի, Դիւ-
լօրիէի, Գուշմիդի, Կօնիքիւրի, Ֆ. Միւլլէրի, Հիւբշմանի, Գեյցէրի
և այլոց աշխատութիւնները պարզել են շատ մութը մնացած
խնդիրներ մեր լեզուի ու գրականութեան վերաբերմամբ և
միւս կողմից մեր անցեալը ծանօթացրել են Ներուպացիներին.
Քանի որ մեր անցեալի ուսումնասիրութիւնը սերտ կերպով
կապուած է մեր հին մատենագրութեան հետ ու վերջինս էլ
գրաբար լեզուով է գրուած, բնականապէս Ներուպացի գիտնա-
կաններն էլ հայոց լեզու ասելով հասկանում էին մեր գրա-
բարը և սովորելիս էլ գրաբարն էին սովորում:

Վերջին ժամանակներս եւրոպացիք սկսել են հետաքրք-
րուել հայերով ոչ թէ միայն հնագիտական և լեզուագիտական
տեսակէտով, այլև իբրև գոլութիւն և ապագալ ունեցող մի
հին ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան ձգտումով. համա-
րեան իւրաքանչիւր տարի ալցելում են մեզ եւրոպացի ճանա-
պարհորդ գիտնականներ և ծանօթանում նաև մեր ալ ժ մ մ ա ն
նիստ ու կացի, մեր ժողովրդի հոգեբանական կողմերի, մեր

նոր լեզուի ու գրականութեան հետ: Սակայն ճանապարհորդութեան շնորհիւ անմիջապէս բուն նպատակին հասնելը հարկաւ միայն ընտրեալներին է վիճակուած. հետաքրքրուողների մեծամասնութիւնը երկրորդական աղբիւրներով պէտք է բաւականանալ: Սրանց միակ միջոցը գրականութիւնն է, որից և պէտք է օգուտ քաղեն իրենց տարբեր նպատակների համար:

Եւրոպացին մեր ալժման աղքատիկ գրականութեան հետ ծանօթանալու համար՝ անհրաժեշտ կերպով պէտք է սովորէ մեր աշխարհաբարը, քանի որ մեր ալժման գրականութիւնից շատ քիչ բան ունենք թարգմանուած եւրոպական լեզուներով—«Armenische Bibliothek»-ի մի տասնեակ հատորիկները և մի քանի հատ ու կտորներ:—Իսկ աշխարհաբար սովորելու համար եւրոպացին ոչ մի օժանդակ միջոց չունէր մինչև այժմ. ան ալս զգալի թերին լրացնում է այժմ լարգելի ուսուցչապետ դր. Ֆինկը:

Ֆինկի անունը անծանօթ չէ սեր ընթերցողներին. լարգելի հայագէտը երկու տարուց աւելի մեր միջավայրում—Էջմիածնում և Տփլիսում—ապրելով՝ բաւականին իւրացրեց մեր աշխարհաբարը, նրա խմբագրութեամբ է հրատարակում Գերմանիայում «Հանդէս հայագիտութեանը»—Zeitschrift für armenische Philologie:—

Ուսուցչապետ Ֆինկի դասադիրքը ոչ ալ ինչ է, եթէ ոչ մեր աշխարհաբար լեզուի քերականութիւնը՝ կազմած գերմաներէն լեզուով, ուրեմն նրանց համար, որոնք կարող են գերմաներէնի միջոցով սովորել հայերէնը, Հարկաւ դիւրին գործ չէ պ. Ֆինկի ձեռնարկութիւնը, ի նկատի ունենալով այն հանդամանքը, որ մեր աշխարհաբար լեզուի քերականութիւնը դեռ ևս մշակուած չէ և նոյն իսկ ինքներս չունենք Արարատեան բարբառի մի քերականութիւն, որ ընդունելի լինէր ամենքի հասար: Այսպիսի հանդամանքներում հարկաւ շատ դժուար պիտի լինէր մի օտար հայագէտի գրութիւնը, որ թէև ընդհանուր լեզուագիտութեան վերաբերեալ օրէնքներին հմուտ է, սակայն հայերէնի վերաբերութեամբ չունի պատրաստի աղբիւր և շատ անգամ ստիպուած է ոչ թէ եղածը հաղորդելու գերմաներէն լեզուով, ալ և նոր մտածելու, կազմելու և մշակելու նոյն իսկ հայերէնը:

Ահա ալս գործում լարգելի ուսուցչապետին մեծապէս օգնել է ձեմարանի ուսուցիչ պ. Ս. Կանալեանցը, առանց վեր-

ջինիս օժանդակութեան գերմանացի ժրջան հալադէտը շատ պիտի զօւարանար:

Քերականութիւնը բաղկացած է երեք մասից. Ա. մասում բացատրուած են հայերէն տառերի հնչիւններն ու դրերը. Բ. մասում խօսուած է բալբի և խոնարհման, գոլական անուններ և դերանունների, հոլովումների և հոլովների, ածականի, թուականի, դերանունների տեսակների և նախադրութիւնների մասին. Գ. մասում բացատրուած է նախադասութեան կառմութիւնն ու տեսակները:

Մենք խօսւ ենք տալիս բուն՝ քերականութիւնը քննութեան ենթարկելուց, որովհետեւ ինչպէս մի փոքր առաջ ևս լիշեցինք, մեր աշխարհարարի քերականական ձևերը դեռ ևս հիմնաւորապէս մշակուած չլինելով՝ վիճելի շատ կէտեր կան և անհատական ճաշակն և ըմբռնումը մեծ տեղ են բռնում: Միայն այսքանն առենք, որ այս ձեռնարկի մէջ, որ գերմանագէտների համար է կազմուած, շատ բան աւելի հիմնաւոր է մշակուած, քան թէ մեր սեպական քերականական ձեռնարկների մէջ. թէև այս երևոյթը տարօրինակ և անբնական կարող է թուալ, բայց իրողութիւն է:

Արդեօք մեր մասնագէտ հայկաբանները մինչև երբ պէտք է սպասեն. ժամանակը չէ հասել դրադուելու մեր աշխարհարարի հիմնական կանոնների մշակմամբ:

Քերականութեանը կցուած է մի ընդարձակ հատուած Պալասանեանի հալոց պատմութիւնից և Ահարոնեանի «Փշուր մը խմց» վիպական պատկերը. վերջը կալ նաև մի համառօտ բառարան հայերէնից—գերմաներէն:

Գրքի առաջաբանում հեղինակը հայերէն սովորողներին առաջարկում է կարդալ և մի շարք աշխատութիւններ մեր նորագոյն գրականութիւնից, սակայն այս ցանկը շատ թերի է:

Դիրքը, որ բաղկացած է 141 էջից—ութածալ—տպուած է Վաղարշապատ, ընտիր թղթի վրայ և մաքուր: Միմիայն Ս. Կանալեանի անխոնջ ջանասիրութեան շնորհիւ կարող էր այսպիսի մի դժուար սրբագրելի աշխատութիւն—հայերէն և գերմաներէնը խառն—համարեմ թէ առանց տպագրական սխալների լոյս տեսնել:

Դինը նշանակուած չէ գրքի վրայ: